ՆՈՐ-ԴԱՐ

№ 187 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Կիրակի, 9 Դեկտեմբերի **1901** Կիրակի, 9 Դեկտեմբերի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 187

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատ է։

ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը 1902-ին հրատարակւում է Թիֆլիսում նոյն ծրագրով և ուղղութեամբ ամեն օր, բացի տօներին հետևող օրերից։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, երեք ամսուանը՝ 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կ.։

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և՛ օտար լեզուներով բառը 2 կ., առաջին երեսումը՝ 4 կոպէկ։

Խմբագրատունը գտնւում է Դաւիդովսկայա փողոց, տ. № 5.

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն Тифлисъ въ Редакцію „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis (Caucase), Rédaction du journal «Nor-Dar».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մտքի ազատութիւնը և օրէնքը։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Ղզլարից։ Գրական աշխարհից։
Թղթակցութիւն.—Նամակ Պարսկաստանից, Սալմաստ։ Նամակ Գերմանիայից, Մարբուրգ։
Մեր չարն ու բարին։
Քաղաքական.—Թիւրքիա։ Հարաւային Աֆրիկա։ Չինաստան։
Հեռագրական լուրեր։
Խառն լուրեր։
Բանասիրական.—Պատարագիչ քահանան։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 8 դեկտեմբերի 1901 թ.

ՄՏՔԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՕՐԷՆՔԸ

Հեռու մեզանից կեղծ համեստութիւնը. ամենայն համարձակութեամբ կարող ենք պնդել, որ հայոց ոչ մի ուրիշ թերթ այնքան պաշտպան չէ եղել մտքի, համոզմունքի ազատութեան, որքան «Նոր-Դար»-ը իր լոյս տեսնելու օրից։ Բառերով և միմիայն մեծագոչ բառերով մտքերը շփոթելու տխուր դերն ուրիշներին տալով, «Նոր-Դար»-ը միշտ աշխատել է, որ հայն ինքն իր ուղեղով մտածել սովորէ և վարժուի առողջ դատողութեան։

Նոյն ուղղութեանն հետևեց «Նոր-Դար»-ը հոգեհանգստի խնդրում։

Մեր եկեղեցին ազատ է, մեր եկեղեցին համբերող է սողները փորձում են քանդել մեր եկեղեցին ճիշտ նոյն եղանակով, ինչ եղանակով յարձակւում էին մեր եկեղեցու դէմ մի քանի տարի առաջ նրանք, որոնք մեր եկեղեցին սառած, քար կտրած, անշարժութեան մատնուած էին յայտարարում և օտար կրօնների գերազանցութեան կռիւն էին մղում Հայաստանեայց Եկեղեցու դէմ։

Այսօր Հայաստանեայց Եկեղեցու ազատ ոգին փառաբանողները և տասը-քսան տարի առաջ մեր եկեղեցին անշարժ, քարացած անուանողներն ու օտար կրօնների գերազանցութիւնը պաշտպանողները միևնոյն մարդիկն են, միևնոյն թերթերն են։

Այս թէպէտև հասարակ մահկանացուի համար անհասկանալի է, բայց փաստ է. և այդ մետամորֆոզը կատարւում է «մի մազաչափ մեր ուղղութիւնից չենք շեղւում» նոյնպէս մեծագոչ բառերի հովանաւորութեան տակ։

Առաջ այդ մարդիկը, այդ թերթերը գործում էին, պնդելով թէ *հայոց եկեղեցին կեանք չունի, հայոց եկեղեցին սառած, քարացած, անշարժ է*. այսօր դրանք գործում են, ասելով թէ *հայոց եկեղեցին ազատ ոգի ունի, համբերող է, ներողամիտ է*։

Միջոցներն են, որ փոխուել են ժամանակի և հանգամանքների շնորհիւ, իսկ նպատակը մէկ է և հաստատ կայ.—քանդել, կործանել։

Բայց որքա՜ն դիւրին գործ է քանդելը, այնքան դժուար է շինելը։

Մարմարեայ փառաւոր արձանը, արհեստի ամենանուրբ ձեռակերտը, հանճարի ամենաբարձր և երկար տարիների արտադրութիւնը կարող են մի քանի հայվաններ, սուտ հրապարակախօսներ, փաստաբաններ, տխմար, վարձկան մարդիկ մի քանի ժամում աւերել ոչնչացնել... Բայց մի հաւաբուն շինելու համար իսկ որքա՜ն աշխատութիւն է հարկաւոր, որքա՜ն հմտութիւն։

«Մեր եկեղեցին ազատ է»— ասում են և ամենքն չեն հասկանում իրենց արտասանած բառերի միտքը։

Եւ ինչո՞ւ հէնց մեր եկեղեցին *է ազատ*. և ինչո՞ւ հէնց մեր եկեղեցին պէտք է *ազատ լինի*։

Բոլոր եկեղեցիների հիմքը Քրիստոսի վարդապետութիւնն է. այս այսպէս լինելով՝ ո՞վ իրաւունք ունի ասելու, որ միւս եկեղեցիներն *ազատ չեն*։

Եթէ մեր եկեղեցին իր կազմակերպութեամբ, իր պատմական զարգացումով և աւանդական կարգերով միշտ աշխատել է հարազատ մնալ իր աղբիւրին՝ Աւետարանին, բայց դա հօ չի նշանակում, որ նա օրէնքներ չունի, որոնց պէտք է հնազանդել, որոնք պէտք է գործ դրուեն, եթէ կամենում ենք, որ եկեղեցին իբրև մի առանձին հաստատութիւն գոյութիւն ունենայ։

Երբ ասում ենք, թէ հայոց եկեղեցին ազատ ոգի ունի, դա նշանակում է, որ բացի օրէնքից ուրիշ էլ ոչ մի հանգամանք չի կարող մեր եկեղեցում տեղ բռնել. երբ ասում ենք, որ մեր եկեղեցու ոգին ազատ է, պէտք է հասկանանք, որ յետին տիրացուներից սկսած մինչև վերը՝ մեր հայրապետները, Սահակներն և Մեսրոպներն ազատ են գործելու միմիայն եկեղեցու օրէնքի շրջանակում. օրէնքից դուրս դրանք իրենց խօսքով, իրենց վճիռներով կոնդակներով հանդերձ նշանակութիւն չունին։

Այն հանգամանքը, որ հոգեհանգիստներ են կատարուել և մահմեդական իշխանաւորների համար,—ապացոյց է, որ հոգին հպատակել է մարմնին, որ դա բացառութիւն է, և աւելի *ուժեղ* կերպով հաստատում է օրէնքը։

Այդպիսի օրինակներն եկեղեցու անճարութիւնն են միայն հրապարակ հանում և ուրիշ ոչինչ չեն ապացուցանում։

Ով որ հայոց եկեղեցու ոգուն ծանօթ է, գիտէ և հայոց օրէնքները,—նրան յայտնի է, որ հայոց թագաւորներն իսկ եկեղեցու բակում, նախագաւթում են թաղուած. օրէնքը չէր թոյլ տալիս թաղել թագաւորներին եկեղեցու մէջ, բայց պատահել է, որ հասարակ իշխանի մարմինը թաղել են (մեր օրերում) եկեղեցու մէջ... Միթէ սա օրէնք է և հետևանք հայոց եկեղեցու ազատ ոգուն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԱՐԱԳԻՉ ՔԱՀԱՆԱՆ

(Հայկական աւանդութիւն)

> Մարդու աչքը չի կշտանալ փողով,
> Մինչև կըլցուի մի բուռն հողով:
> Ազգային առած

Կարնեցի ականաւոր վաճառական Յակովբ աղան, երբ մի անգամ մեծ կարաւանով վերադառնում էր հեռաւոր արեւելքից, հարկադրուեցաւ գիշերն անցկացնել հայաբնակ մի փոքրիկ գիւղում: Լուսաւորչի շաբաթ օրն էր և գիւղում պատարագ կար: Յակովբ աղան երկարատև պանդխտութիւնից յետոյ չկամենալով յարմար առիթը ձեռքից բաց թողնել՝ առաւօտեան վաղ վեր կացաւ տեղից և եկեղեցի շտապեց:

Պատարագն սկսուելու վրայ էր, ժամաւորներ դեռ շատ սակաւ էին երեւում, բայց նա վճռեց մինչև վերջը կանգնել։

Օտարութեան մէջ պանդուխտ հայի համար ոչ մի բան այնքան մխիթարական և նրա սրտին մօտիկ ու հարազատ չէ, որքան հայրենի եկեղեցին, մայրենի ժամասացութիւնը։ Տարագիր հայը վաղուց է խոնարհուել գոռ ճակատագրի վճռին և երկու ձեռքով պինդ ընդգրկել այն համոզմունքը, թէ հայի հայրենիքն այնտեղ է այժմ, ուր հայի ժամ ու պատարագ կայ, ուր հայ աշխարհն ամենայն օր վաղ արշալոյսին «Առաւօտ լուսոյ», «Զարթիք փառք իմ» է երգում։

Պատարագն սկսուեց. աղօթողների թիւը գնալով հետզհետէ ստուարանում էր, և Յակովբ աղան իր փարթամ շքեղ արդուզարդով և առատաձեռն խաչհամբոյրներով շուտով դարձաւ գիւղական պարզ ու աղքատիկ ժողովրդի ուշադրութեան և զարմանքի առարկան։

Գիւղական պատարագի մէջ ամենահետաքրքրական վայրկեանը ներկայանում է ողջոյնի արարողութիւնը, երբ ամենքը՝ ծեր թէ մանուկ, կին թէ տղամարդ ամենն էլ երկիւղածութեամբ ձեռները կրծքի վրայ խաչած գլխի համաչափ օրօրումներով միմեանց կիսաձայն աւետում են փրկչական հրաշափառ յայտնութիւնը

—Ողջո՜յն քեզ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ:

—Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:

Երբ Յակովբ աղան իր մօտ կանգնած մէջքից կորացած ծերունու ողջոյնի աւետիքն ընդունեց և իր հերթում ողջոյնը միւս հարեւանին տալով գլուխը բարձրացրեց ու եկեղեցու բաց դռնով դուրս նայեց, տեղն ու տեղը սառած մնաց. նա չէր իմանում, արդեօք հաւատա՞ր, թէ չհաւատար իր աչքերի առաջ կատարուող այդ հրաշքին. բայց ինչպէս կարող էր չհաւատալ նա, երբ օրը ցերեկով, բազմութեան առաջին, բաց աչքերով տեսնում էր, թէ ինչպէս եկեղեցու գաւթում բուսած ծառերը, հին թէ մատաղ, հետևելով աղօթողների օրինակին, անուշ սօսափիւնով գլուխ էին խոնարհեցնում միմեանց առաջին.

—Ողջո՜յն քեզ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.

—Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:

Յակովբ աղան ոչ միայն տեսնում էր այդ ամենը, այլև պարզ ու որոշ լսում էր իր ականջներով, թէ ինչպէս ծառերը լեզու առած մրմնջում էին. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»։

Յակովբ աղան տարիքով մարդ էր. շատ երկիրներ պտտած, շատ հրաշալիքներ տեսած. նա եղել էր բոլոր նշանաւոր սրբավայրերում - Երուսաղէմ, Էջմիածին, սուրբ Կարապետ նրա սովորական ուխտատեղիներն էին, բայց այդպիսի մի հրաշք նա ոչ մի տեղ չէր տեսած։

Եւ երկրպագութեան այդ ծանր վայրկեանին նա մտաբերեց Քրիստոսի խօսքերը. «Երբ ձեզանից մէկը մանանեխի մի հատի չափ հաւատ ունենայ և ասէ այս լեռանը՝—վեր կաց տեղիցդ ու ծովն ընկիր—լեռը վեր կկենայ ու կընկնի ծովը»։ Եւ նրա սրտին տիրեց մի անդիմադրելի ցանկութիւն, վաղն և եթ առատ աջահամբոյր խոստանալ գիւղական հրաշագործ քահանային և իր հանգուցեալ ծնողաց ու միւս ազգականների հոգու փրկութեան համար պատարագ մատուցանել տալ. Եւ նա խորապէս համոզուած էր, որ հրաշքը կրկին տեղի կունենայ։

Երբ գիւղում լուր տարածուեց, որ հետևեալ օրուայ պատարագը պատուիրել է անցորդ վաճառականը, որը քահանային առատաձեռն աջահամբոյր և ժողովրդին ճոխ հացկերութիւն է խոստացել, ամենն էլ եկեղեցի շտապեցին՝ համ աղայի սիրտը սիրաշահելու, համ էլ հազուադէպ ժամահացից չզրկուելու ախորժակով։

Յակովբ աղան, էլ աւելի հարուստ պճնուած, էլ աւելի թանկագին ակներով զարդարուած, կանգնել էր գիւղական խարխուլ եկեղեցու մէջ և անհամբեր սպասում էր ողջոյնի արարողութեան. բայց ո՜վ չար ճակատագիր, որքան մեծ և անպատում եղաւ մեր մեծատան վիշտն ու սրտի կսկիծը, երբ հակառակ իր հաւատի և ակնկալութեան ծառերն այս անգամ իրենց տեղերում մնացին անշարժ, և հրաշքը տեղի չունեցաւ։

Պատարագը վերջանալուց յետոյ, երբ Յակովբ աղան իր յուսախաբութեան վերաբերմամբ դիմեց պատարագիչ քահանայի բացատրութեանը, վերջինս ամենայն պարզասրտութեամբ պատասխանեց.

—Ո՞վ մեծատուն, դու քո ծնողաց հոգեբաժին խոստացար այնքան ծանրագին մետաքս, բեհեզ և այլ թանկագին կերպասներ ու ոսկի, որքան կարող էր բառնալ մի ջորի. բայց ջորու հարցը դու թողեր անորոշ, և հէնց որ ներքեից դպիրներն սկսեցին եղանակել. «Քրիստոս ի մէջ մեր...» իմ սրտի մէջ մուտք գործեց մի յանդուգն կասկած, թէ դու որ ինձ խոստացել ես մի ջորեբեռն թանկագին իրեղէններ, արդեօք ջորին էլ հե՞տն ես տալու, թէ ոչ:

—Ապա, տէր հայր, սա՛ խնդրեմ, դու ինչ էիր ստացել երէկուայ պատարագի համար, որ ծառերն անգամ սկսեցին ողջոյն տալ միմեանց։

—Ոչինչ, խոտեայ մի հասարակ կեմը, որով արտերում ցորենի խուրձերն են կապում և կամ նեղն ընկած տեղում թոկի տեղ գործածում. այս էլ ասենք,—աւելացրեց տէրտէրը,—որ երեկ պատարագ անել տուողն այրի կին էր, աղքատ, աւուր հացի կարօտ և աւելին ոչինչ չունէր ինձ տալու։

—Բայց ինչ նշանակութիւն ունէր մի աննշան ջորին իմ խոստացած այն մեծ գանձի համեմատութեամբ,—զարմացած տէրտէրի պատասխանի վրայ՝ հարցրեց վաճառականը։

—Բայց և այնպէս, ջորին էլ մի հէյվան է. դարձեալ մի բանի պէտք կըգայ. աւելորդ մալը, ժողովուրդն ասում է, աչք չի ծակի։

Վաճառականը յուսահատօրէն միայն ուսերը թօթուեց և աշխարհի հասկացողութեամբ աղքատի դէմքից տնբաժան համեստութեան ու անմեղութեան կնիքը նրան խիստ կասկածելի թուաց։

Տիգրան Վարդազեան

Ամենից բարձր ազատութիւնն եկեղեցու համար՝ իւր գոյութեան պահպանութիւնն է։

Ո՛չ մի աշխարհական և ոչ մի հոգևորական իրաւունք չունի կրօնի, եկեղեցու վերաբերեալ խնդիրներում, Աւետարանի այս կամ այն խօսքն առաջ բերելով, իւր սեպհական մեկնութեամբ վճիռներ կայացնել և իւր բացատրութիւններն իբրև օրէնք հրատարակել, մանաւանդ այն ամբիօնից, որ չէ ճանաչում հայոց եկեղեցին, որ միշտ կռուել է հայոց եկեղեցու գոյութեան դէմ յօգուտ բողոքական դաւանութեան։

Մի անգամ հրապարակի վրայ դնելով հոգեհանգստի խնդիրը, դրա որոշումը ոչ մէկ աշխարհականի կամ հոգևորականի գործ չէ. միմիայն եկեղեցական ժողովի, հոգևոր ծայրագոյն իշխանութեան գործն է այդ մասին որոշումն անել՝ Հայաստանեայց Եկեղեցու օրէնքներն և հայրապետական կոնդակներն ի նկատի առնելով։

Մի ուրիշ խնդիր կայ, որ պէտք է ուշադրութեան առնել և որի մասին անցեալ առաջնորդողում ակնարկեցինք։

Իւրաքանչիւր պետութեան մէջ որոշ օրէնքներ կան, որոնք պէտք է գործադրուեն պաշտօնեաների ձեռամբ ամենայն ճշտութեամբ այդ օրէնքների ոգու համաձայն՝ պաշտօնեաներն և պաշտօնական հաստատութիւններն ստանում են և հրահանգներ, օրէնքների բացատրութիւններ, որոնք ծառայում են իբրև ուղեցոյց պաշտօնեաների համար իրենց պաշտօնավարութեան միջոցին։

Նոյնը պէտք է ընդունել և եկեղեցու, իբրև հոգևոր հաստատութեան վերաբերմամբ։

Այդ հրահանգների պակասութեանը պէտք է վերագրել այն հանգամանքը, որ իւրաքանչիւր քաղաքի եկեղեցի իւր կարգերն ունի, իւրաքանչիւր քահանայ համարձակ և ինքնագլուխ որոշումներ է անում եկեղեցու վերաբերեալ կարևոր խնդիրներում իսկ։ Այդ անկարգութիւնն և շփոթութիւնն աւելի յայտնուեցաւ հոգեհանգստի խնդրում. քահանան փոխանակ դիմելու հոգևոր իշխանութեանը և հրահանգներ սպասելու, ինքն ինչ ուզում է՝ անում է և դեռ հրապարակով էլ հոգևոր ծայրագոյն իշխանութեան խրատներ է կարդում։

Այս ողորմելի և կազմալուծող դրութեան վերջ պէտք է դնել։

ԽՐՈՆԻԿՈՆ

Երեկ երեկոյեան, դեկտեմբերի 8-ին, տեղի ունեցաւ վերանորոգուած Վանքի աւագ եկեղեցու ս. օծման նախատօնակը խուռն բազմութեան ներկայութեամբ։ Հանդիսադիրն էր Թեմիս նախկին առաջնորդ գեր. Գէորգ արքեպ. Սուրէնեանը, իբրև եկեղեցու վերանորոգութեան ձեռներէց։ Հոգևորականութիւնը հանդիսաւոր թափօրով պտտեց եկեղեցու չուրջը Ս. միւռոնը եկեղեցի ներս տանելուց յետոյ սկսուեց երեկոյեան ժամերգութիւնը, ապա հսկումն կատարուեց։

— Այսօր, կիրակի, դեկտեմբերի 9-ին, Վանքի աւագ եկեղեցու ս. օծման առթիւ ս. արարողը կըսկսուի ժամը 11-ին, որի ժամանակ և տեղի կունենայ ս. օծման հանդէսը։ Նախ կօծուեն երեք ս. սեղանների վէմ քարերը, ապա հանդիսաւոր թափօրը դուրս կըգայ եկեղեցու հարաւային դռնից, կօծէ այդ դուռը, յետոյ կօծուի արևմտեան դուռն և ապա հիւսիսային դուռն էլ օծելով թափօրը կըմտնի նորից եկեղեցի և կօծի աւազանը: Օծումից յետոյ հանդիսադիր սրբազանը կօրհնէ բարերարներին և եկեղեցին վերանորոգող յանձնաժողովի անդամներին, իսկ առաջնորդական փոխանորդ բարձր. Գարեգին վարդապետը քարոզ կխօսի նիւթ առնելով քրիստոնէական եկեղեցու և քաղաքակրթութեան փոխադարձ յարաբերութիւններն և մեր կեանքի վրայ ունեցած ներգործութիւնը։

— Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը մտադիր է Սալդատսկի բազարում գնուած դպրոցապատկան հին շինութեան տեղ (Փիրոյեանցի նուիրած) նոր շէնք կառուցանել։ Դպրոցի ճարտարապետ ինժ. Ն. Գրիգորեանն արդէն կազմել է յատակագիծը։ Այդ յատակագծի համաձայն, նոր շէնքը եռյարկանի կլինի նկուղով. առաջին յարկում զետեղուած կլինին խանութներ, երկրորդը յարմարեցրած կլինի ռեստորանների, իսկ երրորդը հիւրանոցի համար։ Նոր շէնքը կընստի մօտ 70 հազար ր.։

— Այսօր, կիրակի, դեկտեմբերի 9-ին, Կովկասի կառավարչապետի տան մէջ օրուայ ժամը 12-ին նշանակուած է կովկասեան ցուցահանդէսի էքսպոնենտների պարգևաբաշխութիւնը։ Պարգևաբաշխութիւնից յետոյ, ժամը 4-ին, «Օրիանտ» հիւրանոցում էքսպոնենտներն ու ցուցահանդէսի վարչութիւնը ճաշ պիտի ունենան։

— Կենդանիների ժանտախտի դէմ կռուելու համար Թիֆլիսի նահանգապետի տրամադրութեան տակ է դրուած 20,000 ր.:

— Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդը 950 ր. է յատկացրել երկրաշարժից վնասուած հայերի օգտին։

— Գաղտնի խորհրդական Ս. Ա. Ամիբեանի և պաշտօնաթող պորուչիկ Յ. Ս. Ամիբեանի անունով երկու թոշակաւոր պիտի պահուի Մոսկուայի համալսարանում առաջինի կտակած 20,000 րուբլու տոկոսիքով: Թիֆլիսի քաղաքային վարչութիւնն այս օրերս յետ ստացաւ յիշեալ թոշակաւորներին վերաբերեալ կանոնագրութիւնը լուսաւորութեան մինիստրութեան կողմից հաստատուած։

— Մայրաքաղաքի թերթերի ասելով, ներքին գործերի մինիստրութեան մէջ մի առանձին յանձնաժողով զբաղուելու է քաղաքային կանոնագրութեան վերաքննութեամբ ամբողջ Ռուսիայի համար։

— Մեր յայտնի հնախոյզ պ. Ալէքսանդր Երիցեանը նորից ծանր հիւանդացել է։

— Խմբագրութիւնս ստացաւ Ռ. Յ. Պէրպէրեանի «Դաստիարակի մը խօսքերը» վերնագիրը կրող երկը, որ բաղկացած է 224 էջից և արժէ 3 ֆրանկ. գիրքը տպուած է Վենետիկում սոյն 1901 թ.։ Ռ. Պէրպէրեանի սոյն աշխատութիւնը լոյս է ընծայուած Կ. Պոլսում (Իւսկիւտար) նրա հիմնած Պէրպէրեան վարժարանի հաստատութեան մօտերս կատարուած 25-ամեայ յոբելեանի առթիւ։ Յիշեալ գիրքը, որ բաժանուած է չորս մասի, իւր մէջ ամփոփում է բացառապէս բանախօսութիւններ՝ դպրոցական և այլ հանդէսների միջոցին. արտասանուած։ Գրքի առաջին բաժնում զետեղուած են տասն բանախօսութիւն, որոնք արտասանուած են Պէրպէրեան վարժարանի տարեկան հանդէսների միջոցին և ուղղուած են ուսումնարանի շրջանն աւարտող սաներին որպէս վերջին խրատներ։ Գրքի երկրորդ մասը բաղկացած է եօթն ճառից, որոնք արտասանուած են զանազան կրթական հանդէսների ժամանակ. այդ բանախօսութիւնների հիմքը կազմում են բացառապէս կրթական և դաստիարակչական գործերը: Երկի երրորդ բաժինը, որ զետեղուած է թւով հինգ բանախօսութիւն, նուիրուած է կրօնական բարոյականութեանը և կնոջ զարգացմանը։ Իսկ չորրորդը մասում տպուած են չորս դամբանական ճառ արտասանուած զանազան անձերի մահուան առթիւ։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՂԱԶԱԽԻՑ.—Այս տարի Ղազախում սաստիկ գողութիւններ սկսուեցին. կարելի է ասել ոչ միայն գիւղ, այլ և տուն չմնաց ամբողջ գաւառում որ, նրանից ապրանք չգողանային։ Այժմ տեղական ոստիկանութիւնը սաստիկ հետամուտ է, որ գողութիւնը վերացնի: Գաւառին ուրախութիւն է տիրել։

ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Շատ դժուար է բան հասկացնել այն տեսակ մարդկանց, որոնց բերանից ժահահոտ է փչում, սիրտը սև պարկ է. որոնք գրիչ են վերցնում ոչ թէ հասարակական հարց լուծելու համար, այլ ներշնչուած այնպիսի գաղափարներով, որոնք իբրև թեթև մտքի ծնունդ՝ աղբերում են պղտոր սրտերից:

Այդպիսի գրողներին համալսարանն անգամ անզօր է գտնւում օգնել, և նրանք, մորուսներին հինա դրած, ուզում են հաւատացնել մեզ՝ թէ Մեքկայից են գալի ..

Հանգուցեալ Ալիշանի մահը նշանաւոր է նրանով, որ երևան է հանել մի կարգ մարդիկ, որոնք հրապարակով ցոյց են տալիս աշխարհին՝ թէ որքան միամիտ է հայը, որքան խեղճ է նա այն տեսակ հարցերում, որ իւր կոչումն չի գիտակցում. ինչպէ՜ս թեթև է նայում այնպիսի խնդիրների վրայ, որ մի ժողովրդի, հասարակութեան համար խոր՝ կենսական նշանակութիւն ունին։

Ի՞նչ իրաւունք ունենք մեղադրելու սրբազան Անանիային, բարձրապատիւ Գարեգին վարդապետին իրենց միւս քաջալի պաշտօնակիցների հետ, որոնք, աւելի խորն ըմբռնելով, աւելի շրջանկատ լինելով, փակել են հայրենի եկեղեցու դռները մի հանգուցեալի առաջ, որ իւր կենդանութեան օրով, իբրև թունդ կաթոլիկ, ոչ միայն սրբազան պատկառանք չէ տածել դէպի իւր ազգային հին եկեղեցին, այլ և միւս իւր նմանների հետ համարել է նրան հերձուածողների աղօթատուն։

Անհասկանալու ինչ կայ այստեղ:

Ո՞վ է ուրանում Հ. Ալիշանի ազգիս գրականութեանը մատուցած ծառայութիւնը, ո՞վ է հրաժարւում գրական մշակին պատիւներ տալուց, և՛ միթէ Գարեգին վարդապետը և Անանիա սրբազանը, հայրենի եկեղեցու դռները Հ. Ալիշանի հոգեհանգստի առաջ փակելով, կամեցել են ապացուցանել, թէ հայադաւան հոգևորականութիւնն առհասարակ դէմ է Ալիշանին և, հետևապէս, ոչինչ ծառայութիւն չէ խոստովանում նրա կողմից։

Ինչո՞ւ չեն խոստովանում մեր ակարամիտները, որ հանգուցեալ Ալիշանն իբրև թունդ կաթոլիկ, պապին չէր փոխել ամբողջ հայ ազգի՝ ո՞ր մնաց թէ նրա հաւատի հետ, որի երդուեալ թշնամին էր նա։

Եւ միթէ կարելի՞ է պահանջել հայ հոգևորականից, որ նա դեռ մի հոգեհանգիստ էլ կատարի իւր եկեղեցում այդպիսի հանգուցեալի հոգու համար։

Ինչո՞վ է երախտապարտ հայ եկեղեցին կաթոլիկ վարդապետի հոգուն. ինչ է ստացել նրանից որ չէ զիջանում հանգուցեալի վերջի շնչին։

Եւ մեր հակառակորդներն անմիտ համարձակութեամբ պնդում են, թէ մեր եկեղեցին համբերող, երկայնամիտ է, թէ նոյն իսկ աղօթել է նա այլազգիների համար՝ պարսից հանգուցեալ շահի, նոյն իսկ սուլթանի համար... և դրա համար օրինակներ են բերում. «...Յիշեա տէր զչարարս. զթշնամիս և զդաւելիս քո...»

Մենք ոչ այս վկայութեան ենք նշանակութիւն տալի և ոչ սրա ներհակ այն վկայութեանը թէ՝ «Յամենայն ժամ աղաչանք իմ այս են՝ յօտարէն պահեա Տէր զծառայս քո...»

Այդ տեսակ սխոլաստիք դատողութիւնները չեն կարող XX րդ դարի զաւակի ականջը մտնել։ Մեզ համոզելու համար այնպիսի դատողութիւններ են հարկաւոր, որ կարողանային մեզ համոզել, թէ մի եկեղեցու համար աւելի օգտակար է, որ անտարբեր լինի նա դէպի այնպիսի անձնաւորութիւններ, որոնք իրենց ընթացքով ձգտում են գցել իւր հեղինակութիւնը։

Ա. Ազարեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցութիւն)

ՊՐՈՖ. ՄՈՄԶԷՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱԶԱՏ ՄՇԱԿՈՒՄԸ

ՄԱՐԲՈՒՐԳ, 11 դեկտ (ն. տ.).—Շաբաթներից ի վեր գերմանական մամուլի մէջ ընթերցողը միշտ հանդիպում էր մի վերնագրի — «Der Tall Spahn»։ Քանի որ իւր ժամանակին անկարող եղայ այդ եղելութի մասին գրել «Նոր Դար»-ին, ուստի նրա էութեան համառօտ յիշատակութիւնից կանցնեմ առաջացրած հետևանքին։

Սրանից մի քանի շաբաթ առաջ Բոննի համալսարանի պատմաբանութեան արտաքոյ կարգի պրոֆեսոր Շպան գերմանական կայսրի կողմից ուղարկւում է Շտրասբուրգ իբրև նոյն մասնագիտութեան իսկական պրոֆեսոր։ Պրոֆեսոր Շպան դաւանանքով կաթոլիկ է, Գերմանիայի կղերական կուսակցութեան ղեկավար Շպա՛ն ի որդին։ Վիլհելմ կայսրը սրանով կամեցել է Էլզասի իւր կաթոլիկ հպատակների բաղձանքը կատարել, նաև՝ կղերական կուսակցութեան մի հաճոյք պատճառած լինել, քանի որ այդ կուսակցութեան աջակցութեանը նա շատ անգամ կարօտում է։

Այս դէպքը մեծ յուզում առաջացրեց։ Գերմանիայում համալսարանի պրոֆեսորները հրաւիրւում են ֆակուլտետների կողմից, հազուագիւտ դէպքերում միայն ուղարկւում են իբրև նշանակովի. Շտրասբուրգի համալսարանի պրոֆեսորները նոյն իսկ մի բողոք ուղղեցին կայսրին, քանի որ ամենքն էլ դէմ էին Շպանի ուղարկուելուն:

Այստեղ խնդիր է ծագում բնականաբար, թէ ինչ կապ ունի գիտութիւնն այս կամ այն դաւանանքի հետ, և թէ միթէ մէկին պրոֆեսորի պաշտօնի կոչելիս պիտի ի նկատի ունենալ նրա այս կամ այն եկեղեցուն պատկանելը: Եւ ահա ազատ գիտութիւնն այսպիսի նեղ շրջանակների մէջ դնելու դէմ ելաւ բողոքելու Գերմանիայում և նրանից դուրս գիտական աշխարհում հռչակուած պատմաբան պրոֆեսոր Թէոդոր Մոմզէն: Նա պաշտպանում է այն հայեացքը, թէ գիտութիւն մշակողն ազատ պէտք է լինի կանխակալ կարծիքներից, իրեն պէտք է նըպատակ դնէ առարկայի տրամաբանական և պատմական ուսումնասիրութիւնը, նրա աշխատանքի կէտ նպատակը պիտի լինի ճշմարտութիւնը. ճշմարտութեան վրայ է հիմնուած գիտութեան և նրա մշակների պատիւը, երիտասարդ ուսանող սերունդի վրայ ունենալիք ազդեցութիւնը իսկ ով այդ նպատակի դէմ է գործում, կընշանակի նա հարուածում է այն հաստատուն ծառը, որի հովանու տակ են ապրում գիտութեան մարդիկ և որի պտուղներով է կերակրւում մարդկութիւնը։ Եւ այսպիսի հարուած է նըշանակում ամեն անգամ պրոֆեսորութեան պաշտօնի կոչելն այնպիսի մարդու, որի ուսումնասիրութեան եղանակը շրջանակի մէջ է դրուած։ Պրոֆ. Մոմզէն արդարացնում է միմիայն աստուածաբանական ֆակուլտետների պրոֆեսորներին հրաւիրելիս նրանց այս կամ այն եկեղեցուն պատկանելն ի նկատի ունենալը. մնացած դէպքերում, ըստ Մոմզէնի, դաւանական խտրութիւնը գիտութեան ասպարէզում նոյն այդ գիտութեան մահաբեր թշնամին է։ Մի պատմաբանի կամ մի փիլիսոփայի պաշտօնի կոչել, որը պարտաւոր է իւր գիտական ասպարէզում կաթոլիկ կամ բողոքական աշխարհահայեցողութիւնով առաջնորդուել իւր եկեղեցու շահերն ի նկատի ունենալ,—նշանակում է այդ պաշտօնի կոչուածին պարտաւորել, որ նա իւր աշխատանքը սահմանափակէ, կընշանակէ բողոքական պատմաբանին արգելել պապականութեան դրական, լուսաւոր կողմերն էլ երևան հանել, իսկ կաթոլիկ պատմաբանին արգելել բողոքականութեան կամ ռեֆորմացիայի ահագին նշանակութիւնը գնահատել (սրանով ակնարկում է Մոմզէնը Շպանի Շտրասբուրգ ուղարկուելը)։

Այստեղ պրոֆ. Մոմզէն սկզբունքի խնդիր է դնում, թէ արդեօք մէկին պրոֆեսորութեան պաշտօնի կոչելիս ի նկատի՞ պէտք է ունենալ նրա այս կամ այն եկեղեցուն պատկանելը։ Իբրև անհատ, ի հարկէ, իւրաքանչիւր անձն կարող է իւր եկեղեցու հետևող մնալ, իսկ համալսարանի գիտութեան մշակի ուսումնասիրութեան նպատակը պիտի լինի ճշմարտութիւնն երևան հանել։

Պրոֆ. Մոմզենի այս բողոքը մեծ յուզում առաջացրեց Գերմանիայում։ Նրա դէմ դուրս եկաւ պրոֆ. Ֆոն Հերտլինգ, դաւանանքով կաթոլիկ, որն ուզեց ցոյց տալ, թէ երբէք և ոչ մի գիտնական, իւր ուսումնասիրութիւնների ընթացքում, չի կարող ազատ լինել կանխակալ կարծիքներից: Նա ասում է, որ ոչ ոք չէ պահանջում, որ մի բողոքական քիմիկոսի հետ նաև մի կաթոլիկ քիմիկոս պաշտօնի նշանակուի, այն ինչ պատմական, փիլիսոփայական գիտութիւնները գործ չունին միմիայն ուսումնասիրութեան նիւթի հետ, այլ իւրաքանչիւրին յայտնի է, որ այստեղ մեծ նշանակութիւն ունի ուսումնասիրողի անձնաւորութիւնը, նրա կրօնական աշխարհահայեցողութիւնը: Եւ այդպիսով Հերտլինգ միանգամայն արդացի է համարում այն պահանջը, թ գերմանական համալսարաններում յիշեալ մասնագիտութիւնների համար կաթոլիկ ներկայացուցիչներ էլ անհրաժեշտ են։

Պրոֆ. Մոմզէնը մի պատասխանով եկաւ վերոյիշեալ կարծիքի դէմ: Նա չէ ուրանում, որ իւրաքանչիւր անձնաւորութիւն ընտանիքից իւր հետ բերում է այս կամ այն կրօնական, քաղաքական կամ սոցիալական հայեացքները։ Սակայն նա շեշտում է այն հանգամանքը, որ պրոֆ. Շպանի դէպքի նման երևոյթներում ոչ թէ ի նկատի է առնւում այն հայեացքը, թէ համալսարաններում կաթոլիկ աշխարհահայեցողութեան տէր մարդիկ էլ պէտք է նշանակել, այլ այն, որ այդպիսով մի պրոֆեսորի նշանակած են լինում կաթոլիկ պատմաբանութեան, փիլիսոփայութեան համար, միւսին՝ բողոքական պատմաբանութեան կամ փիլիսոփայութեան համար։ Համալսարանի դռները բաց պէտք է լինին բոլոր աշխարհահայեցողութիւնների առջև: Վտանգը սրանում չէ. վտանգը նրանում է, թէ կաթոլիկ պրոֆեսորը պաշտօնի մտնելիս արդեօք պայման չէ՞ դրւում նախ կաթոլիկութիւնը, և ապա ընդունակութիւնը, գիտութիւնը։

Ինչ կարծիք, որ պրոֆ. Մոմզէնի դրած սկզբունքը միանգամայն յարգելի է և ճշգրիտ։ Մոմզէնի հայեացքի պաշտպան հանդիսացան Գերմանիայի համալսարանների պրոֆեսորներից շատ շատերը, որոնք իրենց յարգանքներն ուղղեցին ալեզարդ գիտնականին: Շտրասբուրգի համալսարանի բոլոր պրոֆեսորները, բացառութեամբ Շպանի — որի պաշտօնի կոչուելու առթիւ է հրապարակ եկել Մոմզէնը — մի գրութեամբ իրենց խորին յարգանքներն ու ակնածութիւնն են յայտնում գիտութեան ազատութեան ջատագով Մոմզէնին. Մոմզէնին ուղղած „համակրանքներից յիշատակելի է այստեղ անուանի պրոֆեսոր Ադոլֆ Հառնակի մի գրութիւնը, որն առանձին ուշադրութեան արժանացաւ մամուլի կողմից։ Հառնակ համամիտ լինելով Մոմզէնին, որ գիտութիւնը հեռու պէտք է պահել դաւանական աշխարհահայեցողութիւններից, աւելացնում է այն հանգամանքը, որ գիտութեան ազատ մշակմանն արգելք են հանդիսանում նաև պարլամենտական կուսակցութիւնները, — որոնցից նաև հեռու պէտք է պահել գիտութիւնը: Բացի իւր պաշտօնակիցներից Մոմզէնն համակրանքի արժանացաւ գերմ. առողջ մամուլի կողմից, որը բաւական ժամանակ զբաղուեց այդ խնդրով։

«Գիտութիւնը զօրեղ է,—ասում է պրոֆեսոր և հրապարակագիր Դելբրիւկ,—բայց կուսակցութիւնները յաճախ մահացու հարուած են տուել այդ գիտութեանը, որից սակայն նա միշտ յարութիւն է առել։ Այսօր հաստատ է Գերմանիայում գիտութիւնը, էլ ոչ ոք չէ կարող մահացու հարուած տալ նրան. կուսակցութիւնները կարող են վնասել նրան, բայց ոչ մահացնել»։

Ար. Աբեղեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի Թղթակցութիւն)

ԵՆԻՉԵՐԻՆԵՐԸ ՍԱԼՄԱՍՏԻ ԳԱՒԱՌՈՒՄ

ՍԱԼՄԱՍՏ, 22 Նոյեմբերի.—Տխուր և սրտաճմլիկ տեսարան են ներկայացնում ներկայումս Սալմաստի հայաբնակ գիւղերը։ Նախկին շէն և բարեկեցիկ Սալմաստն այժմ թշուառութեան և տառապանքի վայր է դարձել։ Ամեն տեղ տիրում է խորին աղքատութիւն և յուսահատութիւն. սալմաստեցի հայի միշտ ուրախ և ծիծաղկոտ դէմքն այժմ վիշտ ու կսկիծ է միայն արտայայտում. Խեղճը չգիտէ ինչ անի, ուր փախչի իւր ներկայ անել և դժբաղդ դրութիւնից ազատուելու համար։ Սալմաստեցի հայը չունի այժմ ոչ կայքի, ոչ գոյքի և ոչ պատուի ապահովութիւն. Նա զուրկ է նոյն իսկ կեանքի ապահովութիւնից։ Սակայն ովքե՞ր են սալմաստեցիների ներկայ դժբաղդ ու զարհուրելի դրութեան պատճառը։ Քիւրդը, պարսի՞կը կամ ո՞ր ուրիշը։ Դրանցից և ոչ մինը: Սալմաստեցիներին ներկայ անկեալ և թշուառ դրութեան հասցնողը եղել է և է մի քանի տարուց ի վեր այս գաւառում օրջացած պորտաբոյծ և բաղդախնդիր օտարականների մի խումբ Այդ պարոնները կամ ինչպէս տեղացիները նրանց անուանում են՝ ենիչերիներն իրենց կատարած սպանութիւններով, բռնաբարումներով, կողոպուտներով և այլն ցոյց տուեցին, որ ոչնչով չեն տարբերւում քիւրդ «համիդիէ» կոչուած աւազակներից։ Սալմաստի վերջին 4—5 տարիների տարեգրութիւնը լի է այդ ենիչերիների գործած սխրագործութիւններով։ Նրանք գործել են այնպիսի ոճրագործութիւններ, որոնք անհաւատալի կթուան ոչ-ականատեսի համար։ Ենիչերիներն իրենց նպատակին հասնելու համար երբէք միջոցների մէջ խտրութիւն չեն դնում. Նրանք իրենց ուզածը ձեռք բերելու համար, լինի դա ամենաչնչին մի իր, պատրաստ են ամեն րոպէ սպանութեան դիմելու։ Այդպէս, մի երկու տարի առաջ N գիւղի եկեղեցու բակում ապրող 2—3 ենիչերիներ սպանեցին նոյն տեղում բնակուող մի երիտասարդ ուսուցչի։ Ինչպէս իրենք ենիչերիներն էին պատմում, սպանութեան շարժառիթն եղել է ուսուցչի իւրը և նոր հագուստը ձեռք բերելը։

Մեր խօսքերն աւելի ևս հաստատելու համար մենք առաջ ենք բերում մօտերքս պատահած մի քանի դէպքեր: Մի երկու ամիս առաջ Հ. գիւղի ենիչերիները մտնում են գիշերով նոյն գիւղացի Մ. Գ.-ի տունը Մ. Գ.-ին և իւր կնոջն անկողնի մէջ գտնելով ենիչերիներից երկուսը մերկացրած սրերով կանգնում են անկողնու մօտ և հրամայում են լուռ մնալ, իսկ մնացեալները կոտրում են այդտեղ եղած սնդուկը և վեր առնելով մէջը եղած փողերը և թանկագին իրերը (մօտ 300 թումանի արժողութեամբ) հեռանում են սպառնալով վախից սարսափած գիւղացուն, որ եթէ իրենց ով լինելն ուրիշներին յայտնելու լինի, իւր կեանքը վտանգի ենթարկած կը լինի։ Խեղճ Մ. Գ. հետևեալ օրն իսկ հեռանում է Սալմաստից այլևս չվերադառնալու նպատակով։

Մ. գիւղում, ուր, ինչպէս պատմում են գիւղացիք, չկայ մի կին կամ աղջիկ որ բռնաբարուած չլինէր այդ գիւղում ապրող ենիչերիների կողմից, մի ենիչերի, որը սիրային յարաբերութիւնների մէջ է լինում մի գիւղացի կնոջ հետ և կասկածելով որ վերջինս ուրիշների հետ ևս յարաբերութիւն ունի, դաշոյնի 16 հարուածներ է հասցնում խեղճ կնոջը, որն այդ ժամանակ յղի է լինում.

Վերոյիշեալ Մ. գիւղի ենիչերիներից մէկը, որը վաղուց ի վեր ամուսնացած է, ամենքի առաջ առանց քաշուելու կրկնում էր, որ իւր սիրուհիների (իմա բռնաբարուածների) թիւը մինչև քառասունի չհասնի, նա չի դադարիլ կանանց հետամուտ լինելուց, և առանձին պարծենկոտութեամբ շեշտում էր, թէ 7—8 է մնում, որ այդ թիւը լրանայ:

Երկու շաբաթ առաջ դարձեալ Մ. գիւղում երկու զինուած ենիչերիներ գիւղի մէջ օրը ցերեկով սկսում են հրացաններ արձակել Բաղդօեան եղբայրների վրայ։ Արձակած գնդակներից մէկն անցնելով Յ. Բ.-ի կողքով, դիպչում է մի խեղճ գաղթականի և փշրում նրա աջ բազուկը։ Դժբաղդ և ոչ մի յանցանք չունեցող Յ. Բ. այժմ իւր ամբողջ ընտանիքով տեղափոխուած է Դիլման իրեն աւելի ապահով զգալով պարսկաբնակ Դիլման, քան զուտ հայաբնակ Մ. գիւղում.

Մի շաբաթ առաջ Հ. գիւղի ենիչերիները սպանում են Փ. գիւղացիներից մէկին (Կ. Ս.). գիւղացիք մինչև այժմ էլ չեն կարողանում, այդ սպանութեան պատճառով, ազատուել կառավարութեան կաշառակեր պաշտօնեաների ճանկերից. գիւղացիներից մինչև այժմ մօտ 400 թում. տուգանք են առել։

Սակայն ենիչերիների ո՞ր մի սխրագործութիւնն առաջ բերենք, ո՞ր մէկը թուենք։ Պէտք է զարմանալ թէ ինչպէս են սալմաստեցիք մինչև այժմ ապրել այդ դժոխային պայմանների տակ։ Ժողովրդի դժբաղդութիւնները չեն վերջանում միայն ենիչերիների արարքներով: Այդ արարքների հետևանքն են լինում կառավարութեան բանտը, ծեծը և անվերջ տուգանքները, որոնք հասցրել են գիւղացոց տնտեսական կատարեալ քայքայման, որից ստիպուած սալմաստեցիք սկսել են գաղթել ուրիշ աւելի ապահով վայրեր։ Սալմաստը օրէցօր դատարկւում է իւր հայ բնակիչներից, իսկ ենիչերիներն իրենց ա՛րարքներով աւելի և աւելի են նպաստում այդ բանին։ Իսկ ի՞նչ են անում այն պարոնները, որոնք հասարակութեան առաջ պատասխանատու են ենիչերիների այդ արարքների և նրանց հետևանքների համար։ Ինչո՞ւ չեն աշխատում վերջ տալ ենիչերիների այդ կործանարար ու խայտառակ արարքներին, ինչո՞ւ ականջ չեն դնում ժողովրդի բազմիցս իրենց ուղղած բողոքներին Իրենց ցոյց տուած յանցաւոր անտարբերութիւնն իրաւունք է տալիս կարծել, որ այդ պարոնները նոյն ենիչերիներն են, սակայն աւելի բարձր թռիչքի։

Հրայր

ՄԵՐ ՉԱՐՆ ՈՒ ԲԱՐԻՆ

Ժամանակի դէմ կռուելու համար այստեղ ևս առանձին մասնաժողով է կազմուած, որ և հոգ է տանում քաղաքի մաքրութեան վրայ: Պ. Պալապանեանն այստեղ ևս իւր շնորհքը ցոյց տուեց՝—պնդել և յանձնաժողովին որոշել է տալ, որ ժանտախտ երևալու դէպքում իբրև առանձին, ժամանակաւոր հիւանդանոց դարձնեն հայոց հանգստարանում գտնուած մի շէնք, որ եկեղեցուն է պատկանում...։ Զարմանալին այն է, որ երբ յատկապէս հայ հասարակութեան շահերը պահանջում են քաղաքից մի որ և իցէ զոհաբերութիւն, այն ժամանակ առարկում են, թէ քաղաքն ընդհանուրի սեպհականութիւն է, կարելի չէ քաղաքացոց մի մասի համար այդ մասին բան անել, իսկ երբ քաղաքին հարկաւոր է մի բան, որ յատկապէս հայ ժողովրդին կամ եկեղեցուն է պատկանում, այն ժամանակ գտնում են, որ հայ հասարակութիւն կամ քաղաք մի բան են։ Բայց այս անգամ, ինչպէս երևում է, խոփը քարի է առել, որովհետև եկեղեցական տունը թողել են ազատ։ Ոմանք ասում են՝ մեր փոխանորդն է դրան հակառակել, իսկ ոմանք էլ թէ՝ հէնց Պալապանեանի բարեկամներն են նրան զգուշացրել, թէ մի այդպիսի քայլ կարող չեն քաջլերել։ Ի դէպ. Պալապանեանը իւր 30 ծրագրի մէջ մտցրել է ի միջի այլոց նաև մեր հանգստարանը, իբրև քաղաքի սեպհականութիւն, իւր ձեռքն առնել և «կանոնաւորել», մոռանալով միանգամայն որ մեր հանգստարանները (թւով վեց) մեր քաղաքի հայոց վեց եկեղեցիների սեպհականութիւնն են կազմում, իսկ մեծ հանգստարանը ներկայումս գտնւում է ս. Կարապետ (եօթերորդ) եկեղեցու շուրջ և իւր բակում ունի եկեղեցական շէնքեր—անկելանոց, մատաղատուն, ծառաների բնակարան, ստարատուն և այլն։ Ինչպէս երևում է, պ. Պալապանը քաղաքագլուխ լինելով հանդերձ չգիտէ, որ քաղաքս մօտ 30,000 ժողովուրդ ունի, որի միայն 9000-ն է հայ, և քաղաքի ու հայ եկեղեցու շահերը մի չեն այլ ևս: Նա այդ մոռացել է, բայց երևի նրան այդ բանը յիշեցնող շատ կը լինի։

—

Լսում ենք, որպէս թէ ս. Էջմիածնում մի շրջիկ քահանայ է ձեռնադրուած Ռուսիայում ցրուած հայերին հովուելու համար։ Ո՛վ է խնդրել այդ բանը, ում համար է—չգիտենք, միայն գիտենք, որ ձեռնադրուողը տեղիս դպրանոցից արձակուած մի խեղճ վերակացու է, որ չէր կարողացել նոյն իսկ մի 15 աշակերտ, խեղճ աշակերտ կառավարել։ Այժմս դա մի ընդարձակածաւալ թեմի շրջող քահանայ է նշանակուած և շարունակ ռուս պաշտօնեաների հետ շփում պիտի ունենայ. իւր բանաւոր հօտի պէտքերը հոգայ—առանց մի բառ ռուսերէն գիտենալու։

Զարմանալի է մեր բանը. Սիբիրի ցրուած և իսկապէս անօգնական մնացած հայերն ամբողջ տարիներ քահանայ են աղաղակում և նրանց քահանայ տուող չկայ, իսկ Արեօլ, Տամբով, Վարօնեժ, Կամենսկ և այլն, որ առանձին քահանայի կարիք չունին և չեն խնդրում, որովհետև մեր քաղաքի քահանաները լիովին բաւականութիւն են տալիս նրանց պէտքերին, առանձին քահանայ են ստանում։ Մեր մէջ ոչ կարգ կայ, ոչ կանոն. Ինչո՞ւ ս. Էջմիածնից մի անգամ չէին դիմում տեղիս հոգևոր իշխանութեանը, իմանալու համար թէ հարկաւորութիւն կա՞յ առանձին շրջիկ քահանայի։ Այս էլ ասենք, որ տեղիս ժողովուրդը զանազան պատճառներով շարունակ թողնում է իւր քաղաքը և գնում օտար տեղեր իւր հացը ճարելու։ Այդպէս է կազմուած վերև յիշածս տեղերի հայ բնակչութեան մեծ մասը։ Եւ մեր քահանաների համար մեծ օգնութիւն էր այդտեղերից ստացուած արդիւնքը: Անցեալները Վարոնեժ էի. այդ խնդրի առթիւ խօսեցի Տ. Փ. եղբայրների հետ. Նրանք որ տեղի գլխաւոր հարուստներն են և քահանայ պիտի պահեն, յայտնեցին, որ իրենք տեղեկութիւն և ցանկութիւն իսկ չունին նոր քահանայ ունենալու, ուստի և պիտի բողոքեն։ Վերադարձիս Կամենսկ հանդիպեցայ. միևնոյն բանը լսեցի նաև այնտեղ՝—Նոր հեռագիր էին ստացել ս. Էջմիածնից նորընծայ քահանայից, որը ճանապարհածախս էր խնդրում... Մնացել էին զարմացած—ո՞վ է խնդրել, ո՞ւմ համար է այդ քահանան։ Սակայն մի քանիսը յիշեցին, որ մի խեղճ մարդ մի քանի ամիս առաջ իրենց մի թուղթ էր տուել ստորագրելու և իրենք, զիջանելով նրա թախանձանքին, ստորագրել էին...։ Եւ դուք եկէք ու այս ձևով ձեռնադրուած քահանայից պատասխանատուութիւն, կոչման վեհութիւն պահանջեցէք...։ Գլորւում ենք, գլորւում. Ներկայ հոգևոր ռեժիմը եթէ շուտով վերջ չստանայ, վախենում եմ թէ մեր անկումն անկանգնելի լինի։ Է՞յ գիդի ո՞ւր մնացին մեր ոգևորութիւններն ու յոյսերը, որ տածում էինք տարիներ առաջ։ Չքացան, ծուխի նման ցնդուեցան։

—

Մեր քաղաքի համար չարիք պիտի համարուի այն հանգամանքը, որ քաղաքային իրաւասու լինելու իրաւունք ունին այնպիսի անձեր, որոնք քաղաքային գործերի մէջ վարձով պաշտօն ունին։ Այդպէս օրինակ բժ. Տրապիզոնցեան քաղաքային հիւանդանոցի տեսուչ է, բժ. Աստուածատրեան—նոյն հիւանդանոցում բժիշկ է, ճարտարապետ Տուբբախեան—քաղաքիս ճարտարապետ է և այլն։ Այդպիսի երկու պաշտօններ մէկ անձի ձեռք լինելու վնասն ակնյայտնի է՝ մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ դրանք բոլորն էլ իրար հետ կապուած են «խնամիութեամբ»։ Ո՛վ իւր թանին թթու կասէ. յամենայն դէպս ո՛չ այդ պաշտօնեաները, որ իբրև իրաւասու իրաւունք ունեն իրենք իրենց դատաւորը լինելու։ Մեր հարևան Ռոստովն այդ կողմից աւելի խելօք վարուեցաւ՝—այս տարի իրաւասու ընտրուած էին նաև այնպիսի անձեր, որոնք քաղաքից ռոճիկ են ստանում, օրինակ նոյն քաղաքային հիւանդանոցում պաշտօն ունին։ Նրանց առաջարկեցին կամ իրաւասութիւնից և կամ պաշտօնից հրաժարուել։ Եւ քաղաքային գործերի նահանգական խորհուրդը համաձայն գտնուեցաւ այդ կարծիքին, որը քաղաքային ինքնավարութեան համար սահմանուած կանոնադրութեան 105 րդ յօդուածի բացատրութիւնն է։ Հետաքրքրականն այն է, որ մեր քաղաքը, որ Ռոստովին կից է և նոյն նահանգական խորհրդի վարչութեան ներքոյ, բոլորովին այլապէս է հասկանում յիշեալ 105-րդ յօդուածը և թոյլ տալիս մի ակնյայտնի չարիք։ Կասկած չկայ, որ եթէ քաղաքային ռոճիկաւոր պաշտօնեաները լինէին ներկայ վարիչներին հակառակ մարդիկ, մինչև այժմս վաղուց յարուցած կը լինէր «սկզբունքի» խնդիրը։

Սովորաբար երբ որ մեզանում յիշեալ խնդիրն արծարծւում է, հակառակորդները պատասխանում են, թէ քաղաքային խորհրդի մէջ օգտակար է մասնագէտների ներկայութիւնը, մոռանալով որ մեր քաղաքային խորհուրդն ընդհանրապէս հարուստ է ինտելիգենտ և հասարակական գործերի մէջ եղող անձերով, որոնք միևնոյն ժամանակ մասնագէտներ են (բժիշկ, փաստաբան, ուսուցիչ, ֆինանսիստ) և ընդունակ ամեն մի խնդիր բազմակողմանի քննութեան ենթարկելու. իսկ եթէ մի առանձին ծանր գործ պատահի, սովորաբար կազմւում է գիտակ անձերից մասնաժողով, որին չի արգելւում խորհրդակցութեան կանչելու նաև գրսից գործին հմուտ անձեր։

—

Այս տարի մեր թատրոնում դրամատիքական խումբը բաւական լաւ անսամբլ ունի և պիէսների ընտրութիւնն ընդհանրապէս աջող է, և ժողովուրդը խմբապետին չէ զլանում իւր գոհութիւնը արտայայտելու: Շուտով կըսկսուին նաև բարեգործական նպատակով տրուող ներկայացումները—առաջին մեր օրիորդաց յանձնաժողովի (աղքատախնամ) ձեռնարկածն է, յետոյ կը լինի բարեգործական ընկերութեան օգտին, արհեստաւորաց դպրոցի, դպրանոցն աւարտողների խմբի օգտին...։

—

Նորերս իմացանք, որ տեղիս հոգևոր կառավարութեան գործավար Մուշեղեան տ. Գէորգ քահանան 35 տարիներ ծառայելուց յետոյ հեռացել է իւր պաշտօնից և տարեկան 200 ր. թոշակ է ստանում։ Այս երկրորդ դէպքն է տ. Մուշէ վարդապետի օրով մեր հասարակական գործիչներին թոշակ կապելը. առաջինը պ. Խաչատրեանն էր, դպրանոցի ուսուցիչ, որ այժմ 300 ր. թոշակ է ստանում... Ի հարկէ, թոշակը երկսի համար էլ քիչ է, բայց լաւ է ինչ, քան ոչինչ։ Բացի այդ.ինքն ըստ ինքեան արդէն այդ երևոյթն ուրախալի է.դա սկիզբն է.պէտք է սպասել, որ ապագայում աւելի ընդարձակուի։

Լրատու

Նոր-Նախիջևան, 29 Նոյեմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսում երկու օրուայ ընթացքում ձերբակալուած է 150 թուրք։ Պատճառը յայտնի չէ։

—Մուշից «Հաւասի գործակալութեանը» հաղորդում են, որ վանքի մէջ թուրք զօրքերով շրջապատուած Անդրանիկի խումբը ճղել է զօրքերի շղթան և դիրք է բռնել լեռների մէջ:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

Պրետորիայից «Daily Tel.»-ին հաղորդում են, թէ գեներալ Համիլտոնի Հարաւային Աֆրիկա հասնելուց ի վեր լորդ Կիտչեներն ինքն է անձամբ ղեկավարում պատերազմական գործողութիւնները։ Այն լուրերը, թէ Դեւետը իւր հրամանատարութեան տակ մեծ զօրք է հաւաքել, հիմք չունին։ Նրա սեպհական զօրքը, հաւանաբար, հազար հոգուց աւելի չէ: Ճիշտն այն է, որ նա Օրանժի հասարակապետութեան մէջ ցրուած իւր զօրախմբերին խորհուրդ է տուել միանալ և երեք զօրագունդ կազմել, իւրաքանչիւրը հազար հոգուց բաղկացած։ Լսւում է, որ Դեւետի անմիջական հրամանատարութեան տակ գտնւում է 800 հոգի. երկրորդ զօրագունդը նոյնպէս նրա ղեկավարութեան տակ է գտնւում, իսկ երրորդը գործում է անկախ:

ՉԻՆԱՍՏԱՆ

Նեւ-Եօրկում Չինաստանից տեղեկութիւններ են ստացուած, թէ պրինց Թուանը և Թունֆուսիանը պատրաստւում են իրենց մարդկանցով ներս խուժելու հիւսիսային Չինաստան Մոնղոլիայից։ Նրանք մտադիր են յարձակւում գործել Շանսի գաւառի վրայ և վերցնել Թայգունը, որը պէտք է յենակէտ դառնայ Չժիլի ներս խուժելու համար։ Այնուհետև փորձ կանեն գրաւելու Պեկինը։ Եթէ այս ծրագիրն աջողուի, կըսկսուի մի սոսկալի պատերազմ բոլոր օտարերկրացիների դէմ.

— Շանհայում պնդում են, թէ չնայելով բոլոր հրովարտակներին, արքունիքի Պեկին վերադառնալու օրուայ մասին դեռ ևս ոչինչ յայտնի չէ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ի նկատի ունենալով, որ իրերի դրութիւնը Հարաւային Աֆրիկայում բարդուել է, անգլիական կառավարութիւնը մտադիր է յունուարին գաւառական զօրաբաժնի աւելի քան հազար զինուոր ուղարկել այնտեղ, բլոկհաուզների սիստեմն ընդարձակելու և աւելի իրական դարձնելու համար:

—Կրոյցինգերի գերի բռնուելու մասին «Ռէյտերի գործակալութիւնը» հաղորդում է Միդլբուրգից (Կապի գաղութ). «Դեկտեմբերի 2-ին Կրոյցինգերը Կապի

150 պատգամներով Կոլոբերգի մօտ անցաւ Օրանժ գետը, դիմեց դէպի Կապի գաղութը և փորձում էր անցնել երկաթուղու գիծը Հաննովեր և Տեյբոմ կայարանների միջև։ Բլոկհաուզներից սկսեցին խիստ կրակել նրան. Կրոյցինգերը և 5 բուրք վիրաւորուած են և գերի են բռնուած»։

—Լոնդոնից հեռագրում են դեկտեմբերի 6-ից. «Սմիտֆիլդի կեդրոնական վաճառանոցը դիտելուց յետոյ ռուս գիւղատնտեսների ընկերութեան պատգամաւորներն ուղևորուեցին Գիլդհոլ, որտեղ վաճառանոցի կեդրոնական կոմիտեը նախաճաշ էր պատրաստել քաղաքային հին տանը։ Նախագահում էր կոմիտեի նախագահ Մուէն։ Թագաւորի և ռուսաց Կայսրի կենացներից յետոյ, Նախագահն առաջարկեց «մեր ռուս հիւրերի» կենացը, որի ժամանակ ասաց, թէ ռուսաց Ցարը վայելում է ամբողջ Եւրոպայի սէրը շնորհիւ Իր խաղաղասիրական նպատակների, որոնց տարածումը Նա ճանապարհ է բաց արել դէպի եւրոպական խաղաղութիւնը։ Առանձնապէս շնորհակալութիւն յայտնեց ռուսաց ֆինանսների մինիստր Վիտտէին Անգլիայի վերաբերմամբ իր ասած բարի խօսքերի համար։ «Մեզ համար խիստ կարևոր է բարեկամական յարաբերութիւններ պահպանելը Ռուսիայի հետ, մենք ուզում ենք նպաստել կենսական մթերքների ներմուծմանն աշխարհիս բոլոր մասերից, մանաւանդ Ռուսիայից»։ Աջողութեամբ մրցելու համար, ներմուծուող ապրանքները պէտք է լաւ յատկութիւն ունենան։ Մուէնի ասելով, ինքը լսել է, որ մեծ քանակութեամբ անգլիական գոմէշներ են գնւում ռուսական ցեղի տաւարը լաւացնելու համար։ Կրիւկով, անգլիերէն խօսելով, ասաց, թէ ցանկալի է որ ռուսներն ու անգլիացիներն այցելէին իրար, որպէսզի անգլիացիներն աւելի լաւ ճանաչէին Ռուսիան, իսկ ռուսներն—Անգլիան։ Այն ժամանակ հեշտ կլինի անմիջական յարաբերութիւններ հաստատել, և կըչքանան անպէտք միջնորդները։ Մօտ է ժամանակը, երբ ռուս արդիւնաբերողները ձեռք կըտան անգլիական սպառողներին։ Այնուհետև Կրիւկովը Մոսկուայի հողատէրերի ընկերութեան կողմից Մոսկուա հրաւիրեց ներկայ եղողներին։ Վեսթլիքկի մատնանիշ արաւ այն սրտալի ուրախութիւնը, որով ընդունեց ռուսաց Կայսրի կենացը։ Օլդերման Ստրոնգ ասաց, թէ ինքը հաւատացած է, որ ներկայ այցն օգուտ կբերէ»։

— Ամերիկեան սենատին մի օրինագիծ է առաջադրուած, որի հիման վրայ գաղթականները քննութեան կենթարկուեն նրանց կրթութեան չափը որոշելու համար, և կըհիմնուին վերատեսուչների պաշտօններ քննելու համար գաղթականների դոկումենտներն այն նպատակով, որ անիշխանականներին թոյլ չտրուի մտնելու Միացեալ Նահանգները

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բեռլինի մի ուսանողի ոճրագործութիւնը.—Բեռլինի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետի ուսանող Հանս Ֆիշեր դէմքով վերին աստիճանի տգեղ էր։ Այլակերպութիւնը զարհուրելի բարոյական տանջանքների մէջ էր գցում յաճախ այդ ուսանողին, բայց յանկարծ նա բաղդաւորուեց - Մարթա Ամբերտ անունով մի շատ գեղեցիկ աղջիկ սիրահարուեց այլակերպ ուսանողի վրայ. սակայն այդ բաղդաւորութիւնը երկար չտևեց, որովհետև աւելորդ խանդից ուսանողը մի գիշեր սպանեց իր սիրուհուն, կասկածելով նրա վարքի մասին, և ուսանողը, իբրև մարդասպան, դատի կանչուեց։

Դատարանի նախագահը.—Հասունութեան մրցանակը ստացել էք 1899 թուին. գիմնազիոնում պարապում էք փիլիսոփայութեամբ։

Մեղադրեալը.—Ես այլակերպ եմ. զզուելի կերպարանքի տէր եմ, և հէնց այդ է պատճառը, որ թէ իմ ընկեր ուսանողները և թէ պրոֆեսորներն ինձանից հեռու են պահում իրենց։

Նախագահը.—Ուրեմն այդ է եղել պատճառը, որ սկսել էք փիլիսոփայութեամբ զբաղուել:

Մեղադրեալը.—Այո, զգում էի, որ մարդիկ ինձանից փախչում են, ես ինձ առանձնութեան տուի և ակամայից զգացմունք զարթեց իմ մէջ դէպի մարդկութիւնը։

Նախագահը. — Փիլիսոփայական ինչ գրքեր էք կարդացել։

Մեղադրեալը.—Նիցշէի և Շոպէնհաուէրի փիլիսոփայութիւնները:

Նախագահը. — Աւելի լաւ չէր լինիլ «Գալի պատերազմը» կարդայիք, քան թէ այնպիսի փիլիսոփայի գիրք, որը վերջը խելագարուեց։ Կրօնական բովանդակութեամբ գրքեր էլ կարդացե՞լ էք:

Մեղադրեալը.—Կարդացել եմ Ֆարաուսի «Յիսուս Քրիստոսի կեանքը», նոյնը Ռընանի։

Նախագահը.—Ձեր գիտենալովն ի՞նչ տենդենցիա ունի Շոպէնհաուէրը։

Մեղադրեալը.—Արհամարհանք դէպի մարդկութիւնը։

Նախագահը.—Իսկ Նիցշէն։

Մեղադրեալը.—Նա ասում է, թէ աշխարհիս անբաղդութիւնը նրանից է, որ մարդ ասուած արարածը գոյութիւն ունի։

Դրանից յետոյ Հանս Ֆիշերն սկսում է սպանութեան տեսարանը պատմել:—Իրար հետ միասին գնում էինք ես ու իմ սիրուհին ձեռը ձեռումս: Ես նրա ձեռը սեղմում էի, նա ուզում էր ինձ համբուրել, բայց ես չէի թողնում. Այդ ժամանակ նրան սպանելու սիրտ չարի. Նա սկսեց լաց լինել, որ ես իրեն այլ ևս չեմ սիրում, այդ ժամանակ գրկեցի նրան. և նա իր գլուխը թեքեց կրծքիս վրայ։ Ես ասացի նրան. մնաս բարեաւ. ես ասել մոռց թէ՛ ոչ։ Այդ հարցմունքիս միտքը չհասկացաւ նա։ Հէնց այդ խօսքերից յետոյ ատրճանակն ուղղեցի նրա վրայ։ Նա զարհուրելի ճիչ արձակեց: Բղաւեց «Վալտեր» և ընկաւ։ Երբոր նա գետնին փռուեց, ես վրայ ընկայ և սկսեցի աղաչանք անել որ չմեռնի։ Բայց նա մեռել էր արդէն. ես համբուրեցի և փախայ։

Նախագահը.—Կարծեմ միտք էք ունեցել անձնասպանութիւն էլ գործել. այն ինչ կենդանի էք դեռ։

Մեղադրեալը.—Աղջկանն արեան մէջ շաղախուած որ տեսայ, փախեցայ, տարաբաղդաբար, և չկարողացայ անձնասպանութիւն գործել։

Հանս Ֆիշեր դատարանի վճռով 10 ամեայ տաժանակիր աշխատանքի ենթարկուեց։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Այսու յայտնում եմ ի գիտութիւն ժողովրդեան, թէ քաղաքիս Վանքի աւագ եկեղեցու նորոգութիւնն աւարտուած է և ամսիս 9 ին, կիրակի օրը, կըկատարուի ս. օծումն, իսկ շաբաթ երեկոյեան ժամը 4-ին հանդիսաւոր թափոր կըլինի և ժամերգութիւն։

Երէցփոխ Վանքի աւագ եկեղեցու՝
Իսահակ Բուդաղեանց

(912) 2—2

ՀՐԱՒԷՐ

Այսու յարգոյարար հրաւիրւում են Զըրկինեանց ս. Կարապետ եկեղեցու բարեպաշտ ծխականները յիշեալ եկեղեցին ամսոյս 9-ին, առաջիկայ կիրակի, զկնի ս. պատարագի, 12 ժամին, երէցփոխան նոր ընտրութիւն անելու յիշեալ եկեղեցու համար։

Գործակալ ա. մ. եկ. հայոց Թիֆլիսի՝
Զաքարիա քահ. Զարդեղեանց

(813) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ

Ծանուցանում է պ. պ. անդամներին, կանդիդատներին և մըշտական յաճախորդներին, որ 1902 թուականի համար տոմսակները կարելի է ստանալ «Ժողովարանի» գրասենեակում սկսած նոյեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի 15-ը։

Այն անդամներն ու կանդիդատները, որոնք մինչև դեկտեմբերի 15-ը վերանորոգած չեն լինիլ իրենց մուտքի տոմսակները, համարւում են «Ժողովարանից» կամովին դուրս եկած, բայց կարող են տարուայ ընթացքում նորից մտնել վճարելով 24 րուբլի։

(791) 3—3

№4711
Captol
„КАПТОЛЬ"
ЛУЧШАЯ ВОДА ДЛЯ ВОЛОСЪ,
ДЛЯ ОЧИЩЕНІЯ, ОСВѢЖЕНІЯ, УКРѢПЛЕНІЯ ГОЛОВНОЙ КОЖИ, ОЖИВЛЕНІЯ НЕРВОВЪ.
ОСОБЕННО ПРОТИВЪ ГОЛОВНОЙ ПЕРХОТИ И СОПРЯЖЕННОЙ СЪ НЕЮ ЧЕСОТЫ И ВЫПАДЕНІЯ ВОЛОСЪ.
ПРИГОТОВЛЕНА ПО УКАЗ. Д-РА МЕД. І. ЭЙХГОФФЪ ВЪ ЭЛЬБЕРФЕЛЬДѢ
„КАПТОЛЬ" НЕ СОСТАВЛЯЕТЪ СЕКРЕТНАГО СРЕДСТВА.
ЕДИНСТВЕННЫЙ ФАБРИКАНТЪ
ФЕРД. МЮЛЬГЕНСЪ, КЕЛЬНЪ и РИГА.
ПОСТАВЩИКЪ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА.

М.)№173252 18 2


ЛУЧШІЙ ЦВѢТОЧНЫЙ О-ДЕ-КОЛОНЪ
№4711
РЕЙНСКІЕ БУКЕТЫ
ПРЕВОСХОДНЫЕ ПРОДОЛЖИТЕЛЬНЫЕ И ДЕШЕВЫЕ ДУХИ ДЛЯ ПЛАТКОВЪ
ВСѢХЪ ЦВѢТОЧНЫХЪ И МОДНЫХЪ ЗАПАХОВЪ

(М)№ 128415/26 12—3

1901 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ
ՅՕԳՈՒՏ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
երաժշտական բաժնով
Երաժշտ. բաժնում կըմասնակցեն մանդոլինիստներ Դ. Մ. Փուլինեանի ղեկավարութեամբ, նոյնպէս բալալայկի, ցիտրի, կիթառի վրայ նուագողներ և սոլօ երգիչներ։
Երաժշտական բաժնի սկիզբն է երեկոյեան ճիշտ ժամը 9-ին
Այնուհետև տեղի կունենան
ՊԱՐԵՐ
Պարերի միջոցում մի խումբ սիրողներ Մ. Գ. Պ. ղեկավարութեամբ կերգեն մի քանի խմբական երգեր։
Մուտքի գինն է 2 ր. 20 կ.
(814) 2—1

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ
(Полный русско-армянскій словарь)
Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
Մօտ 100 տպագր. (1.600 եր.), ճշտապրութիւնով, բազմաթիւ ռուսերէն օրինակներով և քերականական ցուցումներով
Բացուած է բաժանորդագրութիւն։ Բաժանորդագինն է 5 ր. 50 կ.։ Թոյլատրելի է սկզբից (մինչև առաջին պրակի լոյս տեսնելը) միայն 3 ր. վճարել։ Տպուելուց յետոյ բառարանի գինը զգալի կերպով կըբարձրանայ։
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ» Лорисъ-Меликовская улица
(815) 2—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ վարչութեան դիրեկտոր Բարսեղ Յովհաննիսեան Ղորղանեանի մահուան պատճառով նրա պաշտօնը, ընկերութեան կանոնադրութեան հիման վրայ, ստանձնել է ըստ ընտրութեան աւագ անձնափոխանորդ Գասպար Գէորգեան Թաթուլեան։

(813) 1—1

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է
Ատամի հականեխական էլէքսիր
„ՍԱԼՈԼ"
(М.) 95174. Սրուակը 75 կոպ. 10—5

SANTAL MIDY
ՊԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ
ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
ԹՈՅԼ Է ՏՐՈՒԱԾ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ
Այս կապսիւլների մէջ պարունակուած զուտ սանտալի էսսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել հոնորէի (գաղտնի հիւանդութիւնների) դէմ կապայ-բալզամի և կուբեբայի դէմ։ Սա ներգործում է աւելի արագ, չի յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չի պատճառում և ոչնչացնում է փսխումն ու կիտեկը
Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսիւլի վրայ լինի սև տառերով դրոշուած անունը։
MIDY
Պահեստը Ռուսիայի գլխաւոր դեղատներում
(М.) № 200369 60—48

Всеобщая Маленькая Газета
„С.-ПЕТЕРБУРГЪ"
Собствен. типографія.—Изданія годъ девятый: СПБ., Невскій, 139.
Всѣ отдѣлы большихъ газетъ и всѣ новости
Всего міра придворн. извѣстія, правительств. и обществ. дѣло, политика, Дальн. Востокъ, война буровъ, среди газетъ, всѣ выдающіяся происшествія, романы, науки, исторія, докторскія замѣтки и пр., и пр. Портреты и картины.
Выходитъ три раза въ недѣлю.
ЦѢНА СЪ ДОСТАВКОЙ И ПЕРЕСЫЛКОЙ:
2р. 50к. за годъ, ЗА ПОЛГОДА 1 руб. за 3 мѣс.
(Ф) 3—3
Редакторъ-Издатель А. Н. Молчановъ.

«РОДИНА» общедоступное изданіе для всѣхъ и обо всемъ
Открыта подписка на 1902 годъ (24-й г. изд.).
КАЖДЫЙ ПОДПИСЧИКЪ ПОЛУЧИТЪ ВЪ ТЕЧЕНІЕ ГОДА:
52 №№ Иллюстр. литер. ЖУРНАЛА: романы, повѣсти, разсказы и пр
52 №№ „ВСЕМІРНОЕ ОБОЗРѢНІЕ": иллюстр. обзоръ міров. жизн.
52 №№ „РАЗВЛЕЧЕНІЕ": юмористика съ рис., задачи и игры.
52 №№ Политической и общественной ГАЗЕТЫ.
24 ДВАДЦАТЬ ЧЕТЫРЕ КНИГИ:
12 — „ОБЩЕПОЛЕЗНАЯ БИБЛІОТЕКА „РОДИНЫ".
12 — „СОБРАНІЕ РОМАНОВЪ „РОДИНЫ".
12 №№ Модъ и рукодѣлій съ рисунками.
12 лист. модныхъ выкр. въ натур. велич.
12 лист. рисунковъ для выпиловки.
12 раскр. лист. узоровъ тамбурн. раб.
12 №№ прил. „ДОМАШНІЙ ТЕАТРЪ".
12 №№ „Для Дѣтей", пов., разск., съ рисунками.
12 №№ „Сельскаго Хозяйства и Домоводства".
12 №№ НОТЪ.
Подробная программа высылается по требованію безплатно.
„РОДИНА" еженедѣльн. иллюстр. журналъ, газета, ДВАДЦАТЬ ЧЕТЫРЕ КНИГИ, со многими приложеніями, среди которыхъ ЕЖЕМѢСЯЧНЫЙ МОДНЫЙ ЖУРНАЛЪ.
За годъ съ пересылкою по Россіи . . 6 р.
Разсрочка: при подп. 2 р. и 1 марта, 1 іюня, 1 авг. и 1 сент. по 1 руб.
Въ 12 книгахъ „СОБРАНІЕ РОМАНОВЪ" выйдутъ романы, пов. и разск., а „ОБЩЕПОЛЕЗНУЮ БИБЛІОТЕКУ" составятъ:
1) иллюстр. поэма въ стихахъ
Божественная Комедія
Эта поэма ДАНТЕ о грѣхахъ на казаніяхъ и радостяхъ загробнаго міра содержитъ 14.000 стих. и выходитъ со 135 рис. Г. Дорэ въ шести выпуск.; изъ нихъ въ 1902 г. выйдутъ 2 послѣдн. выпуска
2) новое общедоступное иллюстрированное изданіе
„ВСЕМІРНАЯ ИСТОРІЯ",
которая, являясь источникомъ самообразованія и обнимая всѣ моменты исторіи міра въ общепонятномъ изложеніи на основаніи работъ извѣстныхъ историковъ, выходитъ при «Родинѣ» выпусками: изъ нихъ въ 1902 г. выйдутъ десять выпусковъ со мног. рис.
Сверхъ того, гг. подписчики «Родины» получатъ:
1) ОТРЫВОЧНЫЙ календарь на 12 мѣс. и 2) Календарь-Собесѣдникъ.
3) ВОСЕМЬ КАРТИНЪ подъ назван. „Сокровища русской живописи".
по оригиналамъ, находящимся въ Русскомъ музеѣ Импер. Александра III-го.
С.-Петербургъ, Лиговская ул., собственный домъ № 11
«РОДИНА», общедоступное изданіе для всѣхъ и обо всемъ
(М) 73211 4—4

Доз. цензурою Тифлисъ, 1901 декабря 6-го дня
Տպարան Ա. Ի. Պետրովի
Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ № 387